ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՆՈՏԱՐՆԵՐԻՆ ԵՎ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ ԿԱԶՄՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

10 դեկտեմբերի 2013 թվականի թիվ 5

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ

2014

ՆԱԽԱԲԱՆ

<u>Ուղեցույցի նպատակը</u>

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) խորհրդի 10.12.2013 թվականի թիվ 5 պաշտոնական պարզաբանման մեջ նկարագրվող բանկերի կողմից նոտարներին և ժառանգներին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ գործընթացները հերթական քայլերով ներկայացնելը:

<u>Շահագրգիռ անձինք</u>

Ժառանգության գործով շահագրգիռ անձ են համարվում մահացած անձի՝

- երեխաները,
- ամուսինը,
- ծնողները,
- թոռները,
- ազգականներ,
- անձինք, ովքեր մահացածի ազգակիցները կամ հարազատները չեն, սակայն ենթադրում են, որ կարող են մահացած անձից կտակել նրա գույքը կամ դրա մի մասը:

Շահագրգիռ անձանց այսուհետ պայմանականորեն կանվանենք տիկին Ժաննա և պարոն Արտավազդ:

Ուղեցույցը կիրառելի է ինչպես Հայաստանում ապրող, այնպես էլ Հայաստանից դուրս ապրող անձանց համար:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՎԱՐՎԵՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՆՁԻՆՔ ՄԱՀԱՑԱԾ ԱՆՁԻ ՄԱՍԻՆ ԲԱՆԿ(ԵՐ)ԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Քայլ 1

Տիկին Ժաննան նախ պետք է գտնի մահացած անձի բնակության վայրի տարածքային նոտարին:

Նոտարների ցանկը, ըստ տարածքների, կարելի է գտնել http://notariat.am/ ինտերնետային կայքում (նշված կայքի նոտար բաժնից մտնել ՀՀ նոտարներ ենթաբաժին):

Հնարավոր է, որ մեկ տարածքում գործեն մի քանի նոտար: Այդ դեպքում տիկին Ժաննան պետք է դիմի այդ տարածքի բոլոր նոտարներին, պարզելու համար, թե որ նոտարի մոտ է գտնվում իրեն հետաքրքրող ժառանգության գործը:

Քայլ 2

Տիկին Ժաննան պետք է դիմի տարածքային նոտարին, որպեսզի նոտարը հարցում կատարի բանկ(եր)ին, մահացած անձին պատկանող բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը պարզելու և ստանալու համար:

Նոտարը բանկ(եր)ին կատարում է հարցում մահացած անձի՝

- բանկային հաշիվներում ունեցած գումարների մասին՝ ինչպես ՀՀ

դրամով, այնպես էլ արտարժույթով,
- բանկային ավանդների մասին՝ ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով,
- բանկին ի պահ հանձնված ոսկու, դրամի, արտարժույթի կամ այլ արժեքների մասին՝ թանկարժեք քարեր, արժեթուղթ և այլն:

Հնարավոր է նոտարը ծանոթ չլինի ՀՀ ԿԲ 10.12.2013 թվականի թիվ 5 պաշտոնական պարզաբանման հետ, և հրաժարվի այդ գործողությունները կատարելուց: Այդ դեպքում տիկին Ժաննան կարող է ցույց տալ նշված պաշտոնական պարզաբանումը, որը կարելի է գտնել ինչպես arlis.am ինտերնետային կայքի հետևյալ հղումով՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=87805, այնպես էլ ՀՀԳՏ 2014.01.08/1 (480) գերատեսչական տեղեկագրում:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նոտարն իրավունք ունի ժառանգության գործով տիկին Ժաննայից պահանջել փաստաթղթեր, ժառանգության գործի նկատմամբ վերջինիս շահագրգռվածությունը ստուգելու և հետագայում բանկ(եր)ից ստացված բանկային գաղտնիքը նրան բացահայտելու համար:

Նոտարը տիկին Ժաննայից կարող է պահանջել՝
- ժառանգատուի մահվան փաստը հաստատող փաստաթղթեր, (օրինակ՝ մահվան վկայական),
- ժառանգության բացման ժամանակը և վայրը հաստատող փաստաթղթեր (օրինակ՝ մահվան վկայական, որում նշված է ժառանգության բացման ժամանակը և վայրը),
- ազգակցական հարաբերությունները կամ կտակի առկայությունը հաստատող փաստաթղթեր (ծննդյան վկայական, անձնագիր, անձը հաստատող այլ փաստաթղթեր, կտակ և այլն),
- ժառանգության զանգվածի կազմը հաստատող փաստաթղթեր (օրինակ՝ ժառանգության վկայական),
- այլ փաստաթղթեր:

<u>Քայլ 3</u>

Տիկին Ժաննայի կողմից նոտարին դիմելուց հետո, նոտարը գրությամբ

դիմում է բանկ(եր)ին, պարզելու համար, արդյո՞ք մահացած անձը բանկ(եր)ում ունի գումար, բանկային ավանդներ կամ բանկին ի պահ հանձնված ոսկի, գումար կամ այլ արժեքներ:

Այս ծառայության համար նոտարի կողմից կարող է գանձվել ծառայության մատուցման գումար (հնարավոր վճարների մասին կարող եք կարդալ ՀՀ կառավարության 26.05.2011 թվականի թիվ N 733Ն որոշման 37-րդ կետում):

Քայլ 4

Նոտարի կողմից բանկին դիմելուց հետո, բանկը համոզվելով, որ իրեն դիմել է մահացած անձի բնակության վայրի նոտարը, նոտարին տրամադրում է մահացածի բանկ(եր)ում ունեցած բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը, ինչպիսիք են՝

- բանկային հաշիվներում ունեցած գումարների մասին՝ ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով,
- բանկային ավանդների մասին՝ ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով,
- բանկին ի պահ հանձնված ոսկու, դրամի, արտարժույթի կամ այլ արժեքների մասին:

Քայլ 5

Բանկի տված տեղեկատվության համաձայն, նոտարը ժառանգած գույքի ցանկում ներառում է նաև մահացած անձի բանկ(եր)ում ունեցած

- բանկային հաշիվներում ունեցած գումարները՝ ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով,
- բանկային ավանդները՝ ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով,
- բանկին ի պահ հանձնված ոսկին, դրամը, արտարժույթը կամ այլ արժեքները:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՎԱՐՎԵՆ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ ՄԱՀԱՑԱԾ ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ՄԱՍԻՆ ԲԱՆԿ(ԵՐ)ՈՒՄ ԱՌԿԱ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ, ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Քայլ 1

Եթե մահացած անձը ունեցել է մի քանի գույք և դրանք ժառանգել են տարբեր անձինք, օրինակ՝ տիկին Ժաննան և պարոն Արտավազդը, ապա նրանցից յուրաքանչյուրը առանձին-առանձին պետք է ունենան՝

- այդ գույքի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագրեր կամ
- դատարանի կողմից ժառանգման փաստի վերաբերյալ դատարանի վճիռ (որոշում):

Նշված դեպքում տիկին Ժաննան և պարոն Արտավազդը կարող են դիմել բանկ(եր)ին՝ մահացած անձի վերաբերյալ բանկային գաղտնիքի կազմող տեղեկատվությունը ստանալու համար:

Բանկը տիկին Ժաննային և պարոն Արտավազդին այդ տեղեկատվությունը կտրամադրի, եթե վերջիններս ներկայացնում են՝

- ժառանգության վկայականը կամ ժառանգման փաստի վերաբերյալ դատարանի վճիռ (որոշում),
- անձը հաստատող փաստաթղթեր:

ՀՀ-ում <u>անձը հաստատող փաստաթղթերն</u> են՝

- անձնագիրը (ինչպես ՀՀ քաղաքացիների, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար),
- ՀՀ հատուկ անձնագիրը կամ կացության քարտը (օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար),
- անձը հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթեր (օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար),
- նույնականացման քարտը (ID քարտը) (ՀՀ քաղաքացիների համար),
- զինվորական գրքույկը (ՀՀ քաղաքացիների համար),
- ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը հաստատող փաստաթուղթը (որպես կանոն նշված փաստաթուղթը ՀՀ քաղաքացիներին տրվում է անձնագրի կորստի դեպքում),
- ծննդյան վկայականը (ՀՀ քաղաքացի հանդիսացող մինչև 16

տարեկան երեխաների համար),
- ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը (ապաստան հայցողների համար),
- կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը (փախստականների համար):

Քայլ 2

Բանկ(եր)ը պարտավոր է(են) տիկին Ժաննային և պարոն Արտավազդին անհատապես տրամադրել մահացած անձի վերաբերյալ իր մոտ առկա ամբողջ տեղեկատվությունը, եթե վերջիններս ներկայացրել են՝
- ժառանգության վկայականը կամ ժառանգման փաստի վերաբերյալ դատարանի վճիռը (որոշումը), որտեղ նշված է իր անունը, որ ինքը ժառանգ է,
- անձը հաստատող փաստաթղթեր:

Անհրաժեշտության դեպքում ՀՀ գործող բանկերի մասին տեղեկատվությունը կարող եք գտնել cba.am ինտերնետային կայքում: